

որ ինչպէս ջուրը բնութեամբ պող ըլլալով երբ կուժի¹³ մէջ գրուի եւ կրակի բռնուի՝ ոչ միայն իւր բնութիւնը կը կորսնցնէ, այլ եւ զինքը զսպող ծաւալն ալ կը յաղթահարէ, նոյնպէս եւ մենք, որ թէեւ սպաւանացու ենք մարմնեղէն բնութեան պատճառաւ, բայց Խորհուրդի հաղորդութեամբ մեր տկարութիւնը կը թողունք եւ առաւելագոյն կեանքի կը զառնանք¹⁴։ Իսկ մար Յովհաննէս Երրայեցեաց (Թղթի) Մեկնութեան Ը. ճառին մէջ կ'ըսէ. «Շատերը այս զոհին տարին մէկ անգամ կը մասնակցին, ոմանք՝ երկու, ուրիշներ՝ սոէպ: Արդ անոնց բոլորին կ'ուզեմ խօսքս. սակայն ո՞րը դուժեմ. զանո՞նք որ մէկ անգամ, թէ զանոնք որ սոէպ կամ զանոնք որ ցանցաւ անգամ (կը մերձենան): Բայց ո՞չ մէկ անգամ, ո՞չ սոէպ, ո՞չ ցանցաւ, այլ մաքուր խղճով, մաքուր սրտով եւ անպարսաւ վարքով (մերձեցողները). անոնք որ այսպէս են՝ միշտ մերձենան¹⁵»:

Սակայն (Հայերը) կը սայթաքին կ'իջնան ուրիշ փոսի մէջ, այնու որ խաչերն ու ժամհարները կը մկրտեն¹⁶: Այդպիսի բան չկայ սուրբ Գրքին մէջ: Քրիստոս ըսաւ Առաքեալներուն. «Գացէք աշակերտեցէք բոլոր ժողովուրդները եւ մկրտեցէք Հօր, Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ անունով¹⁷»: Եւ այս մկրտութեան նշանով կը տարբերինք հեթանոսներէն: Պօզոս կ'ըսէ. «Դուք որ ի Քրիստոս մկրտուած էք, Քրիստոս զգեցած էք¹⁸». ուրեմն խաչերն ու ժամհարները Քրիստոս զգեցած են. այդ խոտան է ճշմարտութեան: «Ով որ ջրէն ու Հոգիէն չի ծնանիր՝ Արքայութիւն չի մտնիր¹⁹». ուրեմն մկրտուող խաչերն ու ժամհարները կը պատրաստուին Արքայութիւն մտնելու. այդ հեռու է ճշմարտութենէ: Մկրտութեամբ որդեգրուեցանք, որով կը զոչենք «Արքա, մեր Հայրը²⁰» ուստի խաչերն ու ժամհարները, զոր կը մկրտէք՝ Հօր որդի կանուանէք. քաւ լիցի: Մկրտութեամբ Մեսիայի եղբայր եղանք. ուստի մկրտուած խաչերն ու

ժամհարները Քրիստոսի եղբայր են. ո՞վ կրնայ ընդունիլ զայդ: Սաչը Եկեղեցւոյ խորհուրդները կը կատարէ, եւ եթէ պակասաւոր ըլլայ՝ խաչ չըլլար. բայց խաչը խաչին բան չ'աւելցնէր, ինչպէս Եպիսկոպոս Եպիսկոպոսի կամ քահանայ քահանայի, վասն զի երկնային (իշխանութեան) մէջ իրարու հաւասար են: Ինչպէս որ խաչին դամուած մէկ մարմնով՝ Եկեղեցւոյ մէջ բոլոր պատարագները սրբուեցան, նոյնպէս նաեւ Գողգոթա հաստատուած մէկ խաչով նուիրագործուեցան բոլոր խաչերը, եւ պէտք չունին մկրտութեան կամ միւսոնի օժման: Քառասուն նահատակներու ճառին մէջ այսպէս կ'ըսէ Բարսեղ. «Պատկերին տրուած պատիւը՝ նախատիպին կ'երթայ²¹». ուստի խաչաւիպտին, որ է նախատիպը, (տրուած) պատիւը կը տարածուի բոլոր խաչերու վրայ եւ մկրտութեան պէտք չկայ: Եթէ խաչը մկրտութեան պէտք ունենար՝ նաեւ պատկերները, նկարները եւ աւետարանները պէտք էր մկրտել:

Ինչպէս որ Մովսէս պնակները ու սափորները կը մկրտէր, նոյնպէս եւ Հայերը խաչերն ու ժամհարները (կը մկրտեն), եւ այդ անկենդան իրերու՝ իրր կենդանիներու՝ անուն կը դնեն: Հեթանոսներն Աստուծոյ անունով կը պատուեն պատկերներն ու քանդակները. իսկ Հայերը՝ սուրբերու անունը կը դրոշմեն խաչերու վրայ:

Եւ կը հարցնեն. «Դուք ի՞նչու տաճարները կը նուիրագործէք (կ'օծէք), եւ խաչերը չէք (օծեր)»: Անոնց կը պատասխանենք. ամէն բան որ նախատիպ ունի՝ պատկեր կ'անուանուի. Եկեղեցիները եւ խորանները որովհետեւ նախատիպ չունին՝ կը նուիրագործուին (կ'օծուին) եւ իրենք իրենց կ'ըլլան նախատիպ. խաչը սակայն վասն զի առաջին նախատիպ ունի՝ պատկեր կը կոչուի, եւ պէտք չէ նուիրագործել (օծել) զայն, ինչպէս նաեւ սուրբերու պատկերներն ու աւետարանները: Երբ կը համբուրենք²² խաչը կամ սուրբերու պատկերը՝ մտքով Մեսիային կամ անոր դամուած խաչին կը համբառնանք եւ զայն կը համբուրենք. երբ պատկեր կը համբուրենք՝ կը բարձրանանք սուրբին եւ հօգուով զայն կը համբուրենք: Մաղաղաթ-

¹³ Ձեռագիրը |oco urna, հայ. «կուժ» բառին ընդ. Միկայանա կը թարգմանէ ըստ, էջ 41:
¹⁴ Patr. Gr. LXXIII, VI., 580.
¹⁵ Patr. Gr. LXIII, XII., 131.
¹⁶ Բարսեղի այս հաստատումը իր փաստերով կը բաղէ Բար-Շուշանի նամակէն, էջ 54-57 (Թրգմ. Հ. Ս. Վարդանան). տես Գեորգ Թղթոց, էջ 345-346:
¹⁷ Մատթ. ԻԲ., 19:
¹⁸ Գաղ. Գ., 27:
¹⁹ Յովհ. Գ., 3:
²⁰ Հոովմ. Ը., 15:

²¹ Patr. Gr. XXXI., III., 510.
²² Ձեռագիրը սխալ. ուղիղ կը սրբադրէ Միսկանա, էջ 43:

ներու երկրպագութիւն չենք ընել, ուր աւետարանները զրուած են, այլ անոնց վրայ զրուած Աստուծոյ խօսքերուն: Բանադրանքի արժանի են անոնք որ խաչերը կը մկրտեն, ու այս կամ այն սուրբի անունով կը կոչեն զանոնք. մենք՝ սակայն խաչը Մեսիային կը ճանչնանք եւ զինքը զիտենք որ բարձրացաւ խաչաւիպտին վրայ եւ յաւիտեանս ուրիշի անունը պիտի չդնենք անոր վրայ: Եւ այս այսչափ:

(Շարունակելի): Զ. Պ. ԼՍԱՊԱԼԵԱՆ



ԵՐԿՈՒ ՆՈՐ ՁԵԹԵԳՐԵՐ. ՀԵԼԷՊԻ ՄԷՋ

Քանի մը որ յառաջ հայերէն երկու նոր ձեռագիր երեւան եկան Հայկազի մէջ: Ձեռագիրները տնական զոյքերու կամ զարդեղէններու կը նմանին. կը կորսուին, երկար ատեն անյայտ կը մնան ու օր մըն ալ յանկարծ երեւան կու գան, աւետարանական բացատրութեամբ ուրախութիւն պատճառելով տանուտիրոջ: Քաղաքիս Ամբրիկեան Վարժարանի Մատենադարանին մէջ հայերէն ձեռագրաց փոքրիկ հաւաքում մը կար. Վարժարանը հոս փոխադրուած էր՝ իր ձեռագիր ու սպաղիւր հաւաքումներովը: Աստուծոյ 19 կտոր ձեռագրեր եւ քններ ու ցանկեր էի իմ Հայկական ձեռագրաց Ֆուցակիս Բ. հատորին մէջ (էջ 74): Ձիս սպասուէր էին որ զպրոցին մէջ աստուծոյ զուրս ուրիշ ձեռագիր չկայ: Գպրոցական ներկայ վերամուտին երբ ուսուցիչ ու ուսանող սկսան դարձեալ զեղբերիլ զբաղարաններու առջեւ, անկիւն մը փոքրիկ ծրար մը դտան, բացին. ուրկէ զուրս ելան երկու կտոր ձեռագրեր: Ասոնք իրենց յիշատակարաններուն շահեկանութեանը տեսակետով շատ թանկագին են: Առաջինը կիսաւեր շարական մըն է ու անունը ինծի համար նորութիւն եղող «առաջարան» մը: Ես, որքան որ կարելի էր աչքէ անցուցի, անգամ մըն ալ, ձեռագրաց տպեալ ցուցակները, զորս ունէի, ու չհանդիպեցայ բառիս: Ֆուցակներէ զուրս եւս հանդիպած չեմ այս բառին: Ձեռագիրս փոքրագիր է, բայց շատ սիրուն ու մանր գրով մը լիցուած: Գրուած է 1270ին Սեպուհ լերան Ս. Լուսաւորիչ մայ-

վանքին շուրջ՝ Կապոս անապատին մէջ: Ձեռագրաց ծանօթ բոլոր հաւաքմանց մէջ վիեննայի Մատենադարանը ունի միայն նոյնպէս Շարակիոց մը, Կապոսի անապատին մէջ գրուած 1343ին¹: Բայց ըստ այլ յիշատակագրութեանց՝ վանքս, որ կը կարծուի կոչուած ըլլալ նաեւ Կայիփոսի վանք², ԺԳ.—ԺԶ. դարերուն եղած է ծաղկեալ անապատ, ուր գրչութիւն եւ մանրանկարչութիւն բաւական յառաջացած են՝ Կոստանդին, Սարգիս եւ Վարդան Առաջնորդաց հսկողութեան տակ³: Վանքիս պատմութիւնը վերակազմելու տեսակէտով կարեւոր է ուրեմն Ձեռագրիս յիշատակարանը:

1.
Շ Ա Ր Ա Կ Ն Ո Յ — Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն
 Հին Թիւ՝ չունի:
 ՁԺԹ = 1270:

Թիւրք.՝ պժմ 237: — Մեծնիթիւն՝ 11 X 8 X 4.5 սնդմ.: — Գրնիթիւն՝ միասին՝ 8 1/2 X 5 սնդմ.: — ՏՈՂՔ՝ 18: — ԹԵՐԹՔ՝ նշանակուած կը գտնենք 24, իւրաքանչիւրը 12 բուրբ, բայց շատ քերի ու անկանոն: — Նիթի՝ ողորկ, սպիտակ ու նուրբ բուրբ: — ԿԱՋՄ՝ փայտեայ կաշեպատ, կողքերուն վրայ տաղանմանով: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՇՊԱՆԱԿՔ՝ չկան: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ վնասուած գործածութեանէ եւ հնուքներէ. կողքին սկիզբներ ինկած յաջորդ 3 1/2 քերքերով, գրեթէ 36 բուրբ, որով մտնանս կը սկսի. — Ո՞ր անպակաս մարմնով ծընար ի սուրբ կուսէն, խանձարուրքս պատեցար, արկազդ զայս... [Կանոն վերափոխման Բ. աւուր. Ող. Բ. համար]: Կազմը ամբողջովին քայքայուած ու քիկուեցր բացուած: Ներքին քերքերէն ոմանք կարէն հեռացած ու քիչ քիւով քուրքեր ինկած ու կարուած: — ԳԻՐ՝ սեւ ընտիր միանով մանուրտիկ շատ յաջող բարդիք, տպագրի նմանողութեամբ, ծայրէ ծայր միեւնոյն գրէն: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ ամէն կանոնի սկիզբը, բաց սրճագոյն, փոքրագիր. համարագրութեանը առ հասարակ սեւի ու կարմրագիր խոնուրդ եւ, երկարագրի նմանութեամբ: — ԵՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագիր, առ հասարակ երկտող, բարդիք: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ ամէն կանոնի սկիզբը, բաց սրճագոյն, սովորական մարմնով: — ԵՈՐԱՆՔ՝ չկան, քերես կային ինկած քուրքերուն վրայ: — ՆԿԱՐՔ՝ ու ՄԱՆՐԱՆԿԱՐՔ՝ կը պակսին: — ԳՐԻԶ՝ Յակովբոս կրօնաւոր: — ՍՏԱՅՈՂ՝ Յովհաննէս կրօնաւոր: — ՏԵՂԻ՝ թի լեռն Ս. Լուսաւորչին ի յանապատիս որ կոչի Կապոսի. ընդ հոգնանա Ս. Յակոբայ եւ Ս. Սիովնի: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԶԺԹ (+ 551) = 1270: — ԾԱՂԿՈՂ եւ ԿԱՋՄՈՂ՝ Արիստակէս գպիր: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ ձեռագիրս մաս կը կազմէ Այնթապու եւ ներկայիս Հայկազի Ամբրիկեան վարժարանի հայերէն ձեռագրաց հաւաքմանց:

¹ Տաշեան, Ֆուցակ հայերէն ձեռագրաց, էջ 489:
² Բնաշխարհիկ Բառարան, էջ 275ր:
³ Տաթև Տարեցոյց, 1927, էջ 185:

Մատենան է Շարակնոց կամ Առաջարան, փոքրագիր, սկիզբը պակասաւոր, մանրատան, ծաղկուած, պատկանելի հնութեամբ: Նկատի առնելով ձեռագրի հնութիւնը, կամ մեցանք անոր բովանդակութիւնը ծայրէ ծայր բաղդատել տպագիր Չայնքաղի շարականի հետ եւ ստորեւ դնել գլխաւոր տարբերակները միայն. այսպէս՝

1. էջ 8. Կանովն Տեառն(ըն)դառաջին. — մարմնացելոյն ի կ. այսաւր ի տաճ. եկիր կատ. վասն փրկութեան հե... (հոս կը պակսին Չայնքաղի քաղուածները):

2. էջ 11. Առաջին (? քերուած) աւրհնութիւն Բ. Թուղթ յետ գնա.

Մայր բնութեանց մարմնացեալ լուսոյն, որ զփրկանս առ ի ծնաւդէն երկնար (այսպէս) հրաշիւք, եւ եղեր աւետեաւք նորոյն լուսոյ զմարդն փրկաւդ աստուածածնելովդ ըզանհարմնացեալ մեծացուցանեմք:

Սերովբէիցն ինքնակամարեալ խորան. եւ բանն հաւր պաշտեալն ի քէն որ ահանա. տաճարի կրտակ փառաց նորոյն լուսոյ զմըշտակրաւդ. աստուածածնելովդ զանհ:

Քիմք հաւատոյ ծրխմանցըն հաւր քեզ որդին կառք փրկման մարդոյն առ միտս տուեալ զոր գրեալն աստուած բարսղիւ առ հաց պատարազի. հողեւոր տաղիւք ըզմեծ սրբուհի. աստուածածնելովդ (կը պակսի Չայնքաղի մէջ): [Հմտ. Պարականոն, էջ 4:]

3. էջ 13 եւ 14. Դաւթի եւ Յակոբու եւ Ստեփանոսի կանոններու մէջ մեծացուցեաները կը պակսին:

4. էջ 88. Կանովն Սրբոյն Գրիգորի մուտն ի վիր. — Որ ի հաւրէ առաքեալ արեղակն արդար... (մեծացուցէն կը պակսի):

5. էջ 101. Շարական Համախայ (կարմիրով). կը պակսի Չայնքաղի մէջ:

Հայր երկնաւոր անկանիմ առաջի անտխակալ քո գթութեանցդ, զի մեղաւք իմովք բարկացուցի, եւ չար առաջի քո արարի. ազաչեմ գքեզ ներեա՛ յանցանաց իմո՛ց, որ միայնդ ես ողորմա՛ծ:

Արք անարկէնք կոչեցին զիս հաղորդել արեան մահու. գրեացի ըզճանսպարհս ճախկողմանն. կատարեցի զչար խորհուրդս նոցա. ազաչեմ գքեզ ներեա յանցանաց իմոց, որ միայնդ ես ողորմա՛ծ:

Մեծ են յանցանք իմ (Տէր) զոր զործեցի յահէ մահու. հրամանաւ Իսմայելեան բոնաւորին, երազեցի հեղուլ զարիւն եղբաւրն. ազաչեմ...:

Աստուած ապաւէն եւ յոյս դարձելոյս ի քեզ. յարենէ փրկեա զիս Տէր, որպէս Թողեր զայն երգողին. Թո՛ղ եւ ինձ ըզպարտիւ մեղուցեալ քո ծառայիս աղ:

Մեղա՛յ Տէր մեղա, Մանասէի(ն) ձայնիւ գոչեմ. ընկալ զիս մարդասէր ընդ երանելեացն, որոց Թողան եւ ծածկեցան յանցանք. ազաչեմ ըզքեզ...⁴:

6. էջ 102—117. Յովնանու մարգարէի եւ Համարէն ննջեցելոց (ԱԶ. ԱԿ. ԲԶ. ԲԿ.) կանովներուն մէջ կը պակսին մեծացուցեաները:

7. Չայնքաղի էջ 483 «Մերձեցաւ անձն իմ»ը, մինչեւ ցվերջ կը պակսի ձեռագրի մէջ: Նոյնպէս կը պակսին ձեռագրէս Չայնքաղի էջ 486 «Արարչագործ աստուած», «Յահաւոր քո զալտեան» եւ «Արեգակն արդարութեան» պատկերները:

8. Նոյնպէս ձեռագրէս կը պակսին «Փառք քեզ», «Ընդ զբարթունս», «զահագին համբաւ», «Ժողովեալքս» շարական եւ պատկերները:

9. Դարձեալ ձեռագրէս կը պակսին՝ «Որ ի հօրէ», «Ես ասացի» եւ «Հայեցայ»ն:

10. էջ 132. Կանովն Ղազարու աւրիւնութիւն (Մեծացուցէն կը պակսի):

11. էջ 135. Կանովն գալստեան Տեառն յԵՄ. — Որ վեր աւրհնիս յաթոռ քե...: Առաջին հարցը կը պակսի Չայնքաղի մէջ: «Որ զերիս մանկուն ի հնոցի սպրեցուցե. աւրհնեալ յաւիտեան:

Որ ի վեցթեւ սրոր. հանդչի տղայո. աւրու. ըն. հրեչ. երզ ար. աւր.:

Յորմէ զող զըւ. երկ. սը. եկե. ոստ. տ.:

Ըզ տէր աւր(հն)եցէք բարձր ա. բե. ըզն:

Որ յաթոռս քեր. հանչ. քրիստոս աստուած. այս ի նոր յաւան նստիլ հաճեցաւ բարձ:

Որ ի դասու երկն. աւր. արան. ձայ այս. ի ձերոց. եւ ի տղա. փառատը. հ.»⁵:

12. էջ 155. Կանովն մեծի երկշարաքի աւրի. — Անեղն ի հաւրէ... (Մեծացուցէն կը պակսի: Նմանապէս կը պակսին Մեծացուցեաները աւագ շարաթու բոլոր օրերու կանոններուն):

⁴ Տես Հին եւ նոր Պարականոն կամ անվանք Շարականներ. Սահակ Վրդ. Ամատունի: Վաղարշապատ 1911, էջ 163—164:

⁵ Հմտ. Պարականոն, էջ 88—89: Չեռագիր չունի վերջին տունը. «Ընդ նոսին եւ մեք երգեցայս՛ սփսանա բա...»:

13. էջ 207. Շարական խնգարկութեան պատարագին Բարսղի ասացեալ ոգէլից վարդապետ (զկ).

«Մըշտածու խընկոյն լուսոյ փայլածու տըւեալ. որ ի բնութիւնըս շնորհաւ զրեցար ծաղկեալդ ի բնաւս ընդ մեզ աստուած. բանդ ի յէնն դաւանեմք աստուած ծնընդեամբ աւետաւք ի կուսէզ գլխուս. ընդ մեզ յայտնութեամբ սրովբէիւք աւծեալդ աստուած առ միտըս բնակեալ. զոր զաւրհնեալդ ի մէնջ մեծացուցանեմք:

Աստուածեան ծնընդոցըս ծով մըկըրտմամբ բըղխաւդ. որ ի տաւիղըս փողոցն հընչեցար առ մեզ կուսիւ զքեզ արարչակրաւդ. արբունն ի հաւրէ հողիս որ ալ զգիւրդ ի հողոյն իմաստնացուցաւդ. զոր ի խաչին առ զրեցեր. յաստուածութիւնդ ըզմիտըս քոյոց մեզ ի Թողութիւն. զոր զաւրհնեալդ իմ:

Բոտմամբ առ քեզ սրտիւք պաղատիմք մայրդ աստուածածին. ի հաւրէն լուսոյ հայցեցես յորդոյդ աստուծոյ զմերըս մաքրութիւն բենամունութեամբ համբարձցես ըզմեզ առ հրաշագեղ ամպդ արտափայլուն. յարքայական կատարդ սաւառնեա զհօգի մեր Բարսղի միջնորդ տէրունի. զոր զաւրհ...:

Ի Գանձարանըդ հրաշըն հրացեալ հորդէ զյանցանս յէակըս տարրից. քանդի էակիցըն հաւր նորոգեալ բնութեամբ հորդէ ըզկալս իւր հեծանոցաւ սոսկալեաւ քննի ի քէն ի հաւրէ յաւէտն իսկապէս. Թողութեամբ քննել ըմբըս դատես զմեզաց պաշտանեայս. զոր փրկեմամբ ըզմեզ առ հայր յիշեցես. զմայրըդ հաւատոյ մեծա:

Աստուածածոր ծաղկանց հոտատու բերկրեալ մեզ զարուն. ներկեալ զըմբուսաւ բուսմամբ կինամոն յատկեալ անըման. եկեալ առ լաստիդ. պարագրի այսաւր որդէպէս սկիզբն աստուածութեանն. կրելով առ մարմնապէս զանմարմնարանաւ, ծնունդն ի հաւրէ, զորըս փրկեմամբ ըզմեզ առ հայր յիշեցես զմայրըդ հաւատոյ մեծացուցանեմք:

Մաքրումըն կրից բըթիչկ կառուցեալ մարդկան Մարիամ. աստուածառաք հրեղինաւըն զարբիէլին առ հոգով զքրիստոս. զորդեալ մեզ ուղղիս հայցես մըշտապէս զփառըս հայրենի. զի ի Թոշակէդ ազգեացես Բարսղի ըզգուլթ քոյոց մեծիդ ընտըրման. ի յորդոյ քոյոս եւ ինձ Թողութիւն ըզմայրըդ հաւատոյ մեծացուցանեմք»⁶:

⁶ Հմտ. Պարականոն, էջ 173—174, ուր կը պակսին վերջին երկու տուները վերոգրեալ Շարականիս:

14. էջ 221—260. Կանովն Աշխարհամատրան. կանովն Յարութեան (բզ, դձ, զզ, դձ եւ զզ) կը պակսին մեծացուցեաներն ու նաշուները:

15. էջ 270—297. Հոգեգալստեան Եօթնօրեայ կանոններուն մէջ կը պակսին նոյնպէս Մեծացուցեաները:

16. էջ 298—328. Կանոն Յովնանու Մկրտչի, Ս. Գրիգորի, Որդուց եւ Թոռանց, Ներսէսի հայրապետին, Ս. Սահակայ, Ս. Հովսէփսիմեանց, Ս. Սանդիստայ եւ Տապանակի շարականներուն մէջ ամէն տեղ կը պակսին Մեծացուցեաները:

17. էջ 347—372. «Նշանաւ» եւ «Հրաշակերտ» ունին «Մեծացուցեաները, բայց ԺԲ. վարդապետաց, Ս. Նախահարց եւ Ս. Յակոբայ կանոններուն մօտ կը պակսին: Նոյնը կը պակսի Մարտիրոսաց հարցերէն յետոյ:

18. էջ 472. Յիշատակագրութիւնք՝ հատմը միայն.

Ա. (Գլխաւոր յիշատակարան).

«Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն հաւր եւ որդոյ եւ սրբոյ հողոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամեն:

Աստանաւր յանկ ելեալ աւարտեցաւ մատենան որ է առաջարան. ի լեառն սուրբ Լուսաւորչին ի յանապատիս որ կոչի Կապոսի. ընդ հովանեաւ սուրբ Յակոբայ եւ սուրբ Սիովնի. ի Թու՛ Հայոց. ՉԺԹ (1270). ի Թագաւորութիւնն Հեթմոյ եւ ի հայրապետութեանն Տեառն Յակովբայ. եւ յառաջնորդութեան արքեպիսկոպոսին մերոյ Տէր Սարգսի. մայրաքաղաքիս Եզնկայի, եղև կատարունս սորա, ձեռամբ մեղապարտ եւ սուտանուն կրանաւորի Յակովբոսի: Բայց զրեցաւ սա ի խնդրոյ պատուելի եւ սրբասէր եղբաւր մերոյ Յոհաննիսի. որ ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ, եւ յիշատակ իւր եւ ծնաւդաց իւրոց. հաւր իւրոյ սրբայսնեալ ձերոյն Առա՛մ քահանայի, եւ մաւր իւրոյ Տիկնոյ: Արդ ազաչեմ զամենեան որք հանդիպիք սմա եւ աւկտիք յիշեալիք զեղբայրն մեր Յոհաննիս սր ստացաւ զսա յիշատակ իւրոյ. տէր աստուած վայելեալ (այսպէս) տացէ: Եւ ես մեղուցեալ ծառայս... Յակոբոս գրաւդ սորին ազաչեմ յիշել յաղաւթս քո... (երեք չորս բառ չի կարդացուիր մաշած ըլլալուն) զՄիթիթար որ հանդուցեալն է եւ եղբայր սուրբ Յոհանն... լոկ դպիր որ զթողութի կոկեաց բազում աշխատութեամբ: Յիշեալ կազմող սորին գնըստակէս դպիր, որ ծաղ-

կեաց եւ կազմեաց զ... եւ զուրբ լիջիք յի- չել... ի քրիստոսի եւ նմա փառք յաւիտեան»:

Բ. էջ 245. Ստորին լուսանցքին վրայ յոյժ մանրատառ.

«Ո՛ր սպանանեաց զիս քունն յայսմ տե- ղըջ. կենդանի է տէր. եւս առաւել ճանճն զաչս իմ եհան»:

Գ. էջ 471. Ստորին լուսանցքին վրայ.

«Ո՛հ բազում վիշտս ի ճանճէս»:

Երկրորդ ձեռագիրը Հաւաքածոյ մըն է Աթանասի եւ Կիւրղի հարց ու պատասխանի եւ ճշմարտական վարուց, զրուած յԱյն- թապ: Յիշատակարանը կը պատմէ որ Հա- ւաքածուս զրուեցաւ 1669ին, երկրորդ ան- զամ կաթողիկոսութեան Կիլիկիոյ Տէր Խա- շատուրին, որ այդ տարին երկրորդ անգամ ըլլալով աթոռ նստաւ: Ողբացեալ Բարդէն կաթողիկոս առձեռն յիշատակարաններու վրայ հիմնուած, գրեց իր — Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ — ուր սակայն Խա- շատուր Գ. Գաղատացոյ (Մինոէրճի) վրայ խօսած ատեն երբեք չի յիշեր անոր երկրորդ կաթողիկոսութեան պարագան: Կրթնած ձեռագրին յետագայ կարեւոր յիշատակարա- նին վրայ, կրնանք որոշապէս ըսել՝ որ Խա- շատուր Հալէպի մէջ 1663ին Ասորոց Ան- զրէաս եպիսկոպոսը եւ 1664ին ալ Եղիազար եպիսկոպոսը կաթողիկոս օրհնեց, Եկեղեցւոյ մէջ ծաղած յայտնի դժուարութիւններով պաշտօնանկ եղաւ եւ կամ ինքը խոհեմութիւն համարեց քաշուիլ ու 1669ին միայն վերստին կոչուեցաւ կաթողիկոսութեան, հակադրել տալու զիտաւորութեամբ՝ անտարակոյ՝ Հա- լէպ նստող Դաւիթ Կարկառեցի հակաթոռ կաթողիկոսին, փրկելով այսպէս ազգային արժանապատուութիւնը:

2.

Հ Ա Ի Ա Ք Ա Յ Ո Յ

Հին Թիւ՝ չունի:

ՌձԺԸ = 1669:

ԹՌԻՎԹԻՒՔ՝ 135: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 13 X 9,5 X 3 սնդմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին, իբր 9 X 6 սնդմ.: — ՏՈՂՔ՝ պէս պէս՝ 17, 18, 19: — ԹԵՐԹՔ՝ առաջին մասին (Հարցումն Աքանասի) 6: Ա՝ 13, Բ, Գ եւ Ե՝ 12, Գ եւ Զ՝ 11: Երկրորդ մասին (ի Հարցումն վա- րուց) 5: Ա՝ 11, Բ, Գ եւ Դ՝ 12, Ե՝ 15: — ՆԻԻԹ՝ հասարակ հաստ քուղք, անողորկ: — ԿԱԶՄ՝ շագա-

7 Տես «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ», Բարդէն Կաթողիկոս. Տպ. Անթիլիբաս (ընդ մամուլ):

նակագոյն կաշեպատ, խաւաքարեայ, լանջով ու բի- կունեով: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չկան: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահուած. միայն կազմը քիչ մը խախտած: — ԳԱՏԱՐԿ ԹՌԻՎԹՔ՝ 268—270 էջերը՝ ի վերջ: — ԳԻՐ՝ սեւ ընտիր մեղանով նոտրգիր. հա- մարները ունին կարմրագեղ սկզբնատառեր: Կարմիրով են նոյնպէս հարց — պատասխանիք: — ԶԱՐԴԱԳՐԵՐԸ, ԼՈՒՍԱՆՅՅԻԹ ԶԱՐԴԵՐԸ ու մէկ ԽՈՐԱՆԻԿԸ՝ գծագրա- կան պարզ փորձեր են, սեւով: — ԳՐԻԶ՝ Պաղտասար երէց: — ՍՏԱՅՈՂ՝ գրիչը: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌձԺԸ (1669): — ՏԵՂԻ՝ Այնթապ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ ձե- ուղիքս մաս կը կազմէ Թուրքիոյ Կեդր. Գօլէնի (այժմ Հալէպ Գօլէժ) ձեռագրաց հաւաքման:

Մատենա է Հաւաքածոյ, թղթեայ, փոքրադիր, կազմուած, որ կը բովանդակէ.

1. էջ 1—6. Յանկ նիւթոց, իբր 114 զլուխք:

2. էջ 7—132. Երանելոյն Աքանասի ար- քեպիսկոպոսի Աղեքսանդրացոյ: — Հարց- մունք վայելչակամք, եւ պատասխանի կիւրղի Երուսաղիմայ Հայրապետի. օղնեա՛ հողիդ սուրբ աստուած: — Հետեւումն համարիմ ընդ Աստուծոյ երիս բանս. եւ ապա այսու- հետեւ ի մէջ գալ. քանզի բազմաց խնդիր լի- նել վասն այսմ... (Հմմտ. Տաշեան, Յուլիան, էջ 663—664 եւ Յուլիան Ձեռագրաց Լիւրաւայի, Հր. Անտեան, Թիւ 1):

3. էջ 133—143. Կանոն եւ պատուիրան յամենայն մեղացն, գոր գործել տայ չարն սատանայ. — «Եղբայրաստանն Խ. քառասնից տայ. Ե. տարի զլուսին չածիլէ. Գ. տարի չորսպահէ կենա՛ ազուհաց ուտէ...»:

4. էջ 145—218. Ի Հարանց վարուց: — «Մեծն Անտոն, ասաց երեք խաւք. զոր թէ ատնէ ոք ապրի չառնել ինչ ատանց վկայու- թեան...»:

5. էջ 218—243. Ի վարուց նգնաւորաց այլ բանից ասարոց. — Երբեմն հայր Անտոն աղօթէր ի խրճիթն իւրում. եւ եղև առ նա ձայն որ ասէր. Անտոնիէ...»:

6. էջ 243—245. Երանելոյն Մակարա բանի խրատու ոգեղան. — «Որ ոչ քեցեացի յամենայն հիւթից յաւիտենիս ոչ կարէ ժա- ոանդել զսոյոյ կեանս...»:

7. էջ 245—247. Հարցումն խրատուց միանձանց կրաւաւորաց. — «Բարիք է ստանալ երկուս հանդերձս...»:

8. էջ 247—267. Գրիգորի Նարեկացոյ պալաք վասն ջերման. — «Արդ այսքանեաց անբաւից հրաշից հանդերձիչ հայր ամենա՛ ստեղծ...»:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Հատ մը միայն ի վերջ ասաջին մասին, յէջ 142.

«Գրեցաւ սակաւ բանքս որ է յառ՛ջին հարցմունք սրբոյն Աթանասի եւ Կիւրղի. եւ սակաւ կանոնք. եւ սակաւ հարանց վարք ի թվ. Հայոց ՌձԺԸ (1669). ամին ի Բ. ի կա- թողիկոսութեան Կիլիկիոյ Տէր հաշատուրին զոր այսմ յամի կրկին նստաւ յաթոռն. եւ յայսմ ամի եղև մահ տարածամ ի յԱնթափ, ի Քիլիս եւ ի Հալապ. սկսաւ զատկին մինչեւ ի փոխման աստուածածնին զոր Տէր Աստուած ողորմեսցի ննջեցելոցն: Ձեռամբ սուտ անուն Պաղտասար իրիցու զոր անուամբ միայն եմ քահանայ եւ զործով ոչ. ի քաղաքն յԱնթափ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածին յեկե- ղեցւայն: Արդ աղաչեմ զձեզ ով զասք քահա- նայից եւ որք հանդիպիք ի սմա կարգալով կամ տեսանելով. յիշեցէք ի մաքրափայլ յա- զօթս ձեր զմեղապարտ զժողս մէկ հայր մե- զայիւ. եւ որ յիշէք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ յԱստուծոյ որ է անբ՛նեալ յաւիտեանս յաւի- տենից ամէն Հայր մեր որ յե»:

ԱՐՏԱԻԱԶԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ



ՅՈՒՅԸԿ ՀՃՅԵՐԸՆ ՁԵՌԵԳՐԸՑ Ի ԲՈՒԼՎԵՐԸ

(Շարունակութիւն):

5.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ԹՌԻՎԹՔ՝ 335 (= էջ 670): — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 19 X 13: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսին 9 X 6,50: — ՏՈՂՔ՝ 19: — ՆԻԻԹ՝ քուղք ողորկ: — ԿԱԶՄ՝ տախ- տակեայ, ամուր, համակ արծաթապատ քիկունեով եւ լանջով. երկու կողմն վրայ գոյց մը նկարներ՝ ա՛ յաշելութիւնը, իսկ բ՛ը՝ հաւաքորէն Համբարձում: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ երկու հաս սկիզբը եւ երկու հաս վերջը, որոնք առնուած են մագաղաքեայ երկսին ուրիշ աւետարանէ մը, ծայրերէն կտրուած եւ պատշաճեցուած կազմիս. ուրկէ վնասուած են ծայրի գրերը: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր եւ բաւական լա- կապակուած, միայն տեղ տեղ անջան վնասումներ ԳՐԻ, շօշափումի հետեւանեով: — ԳԱՏԱՐԿ՝ ԹՂ. 1ա, 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա, 12բ, 13, 14, 15ա, 105ա, 254բ, 255ա, 330բ, 331, 332, 333, 334, 335: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ՍԿՁԲՆԱԻՈՒ ԲՈՒԹԻՒՆՔ՝ երկնեայ եւ ոսկեղբուր: — ՍԿՁԲԻ ԳԼԽԱԳԻՐՔ՝ կենդանագիր, քոչնագիր եւ գարգալի, կարմիր մեղանով: — ԼՈՒՍԱՆՅՅԱԶԱՐԳՔ՝ բազմաբիւ (230 հատ), գունագեղ, շէնդ: — ԽՈՐԱՆԻՔ՝ քղ. 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա, 11բ, 12ա, 16ա, 106ա, 162ա,

256ա սիւնագարդ եւ բաւականին յաջող, երկնեայ եւ ոսկեղբուր: — ՆԿԱՐՔ՝ Զորս Աւետարանիչները (քղ. 15բ, 105բ, 150բ, 161բ, 255բ): Բաւական յաջող եւ գեղեցիկ: — ԳՐԻԶ՝ Գրիգոր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌձԸ (1617): — ՏԵՂԻ՝ Քէօքսիա: — ԾԱՂԿՈՂ՝ անձա- նօք: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Աղբաւաւապոյտայ Ս. Թո- բաս Եկեղեցւոյ, այժմ ի պահ Ֆիլիպէի Ս. Գեորգ Եկե- ղեցւոյ գանձատուր՝ 1922էն ի վեր:

Մատենա է Աւետարան: Մատթէոս (Թղ. 16ա—104բ), Մարկոս (Թղ. 106ա— 161ա), Լուկաս (Թղ. 162ա—254ա), Յով- հաննէս (Թղ. 256ա—324բ), եւ Յիշատակա- րան (Թղ. 325ա—330ա): — ԹՂ. 3բ, 4ա (Եւսեբի Կարպիանոսի սիրելի եղբոր ի Տէր սղջոյն) Ամո(վ)նի Աղեքսանդրացւոյ. եւ հա- մեմատական տախտակներ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 254ա. «Չողորմելի եւ զչարեաւք լցեալս ո՛վ տէր յիշեա, թէ եւ չե՛մ արժանի Գրիգոր զըջիկ»:

2. Թղ. 325ա—330ա. Բանի յիշատակի կատարման Սուրբ աւետարանի. «Փառք... Կերպացեալ այս բանիւ որդիք սինի քահա- նայք եւ մանկունք ընտրեալք յաշխարհի: Չատաջնորդն ընտրեաց բանաւոր հաւտին Քրիստոսի ըզտէր Յակոբ եպիսկոպոս Քաւ- թնիկացի որ եւ գրել երես զսուրբ աւետա- րանս յիշատակ իւր հողոյն եւ հաւրն տէր Պետրոս քահանային եւ մաւրն Մարթային եւ Եղբարն Չաքարիային եւ ջուրոջն Լալիա- թոնին եւ մեծ մաւրս ձաշիկին եւ այլ ամե- նայն արեան մերձաւորացս: Գրեցաւ զսուրբ աւետարանս ի մայրաքաղաքն Քաւթնիկա ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սրբոյն Սարգսի զաւրաժարին եւ սրբոյն Թէո- զորոսի զինաւորին ի յաթոռակալութեան սուրբ էջմիածնա տեան տէր Մելքիսեթ կա- թողիկոսին եւ միւս այլ քաղաքին Կիլիկիա սր կոչի Սիս ի յաթոռակալութեան սորա տեան տէր Յովաննէս կաթողիկոսին: Եւ վարդապետին իմոյ տէր Գրիգոր քաջ բա- բունապետին Կեսարիացոյ զոր Տէր Աստուած յերկար ամաւք պահեցէ զնոսա մինչեւ ի խորին ծերութիւն: Ընծայ մատուցի զսա յի- շատակ ինձ եւ ծնողաց իմոյ ըզվերոյ գրեալս յիշեցէք ի Քրիստոս զի թերեւս զացուք ողոր- մութիւն յահեղ աւուրն համառաւտի որ աւրն է մեծ եւ երեւելի այսու եւ յիշմամբ ձեր սուրբ ազաւթիւք եւ մաղթանաւք: Եւ արդ յերես անկեալ աղաչեմ եւ ի գուճս ելեալ տատան- մամբ մատամբս եւ աղերասնաց մաղթա- նաւք աղաչելով խնդրեմ ի սրբազունը ժողո- վեալ եզրարցոյ որ աստ ժողովեալ էք յաղագս